ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/7753/05/22
Նախագահող դատավոր՝ Ա. Հարությունյան
Դատավորներ՝ Հ. Խաչատրյան
Մ. Մելքումյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/7753/05/22**
2026թ.

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ք. ՄԿՈՅԱՆ

2026 թվականի նոյեմբերի 13-ին

գրավոր ընթացակարգով քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 02.05.2025 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի «ԷՍ-ԲԻ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե)՝ «Հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ» 10.05.2021 թվականի թիվ 1518030 ակտը մասնակի՝ 100.000.000 ՀՀ դրամի չափով տուգանքի և 10.000.000 ՀՀ դրամի չափով հատուցման ենթակա վնասի գումար հաշվարկելու և գանձման առաջադրելու մասով անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է անվավեր ճանաչել «Հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ» 10.05.2021 թվականի թիվ 1518030 ակտը՝ 100.000.000 ՀՀ դրամի չափով տուգանքի և 10.000.000 ՀՀ դրամի չափով հատուցման ենթակա վնասի գումար հաշվարկելու և գանձման առաջադրելու մասով:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Պետրոսյան) (այսուհետ՝ Դատարան) 03.07.2024 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 02.05.2025 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ Դատարանի 03.07.2024 թվականի վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը բավարարվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Կոմիտեն (ներկայացուցիչ՝ Արման Մնացականյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասը, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 60.2-րդ հոդվածի 2-րդ մասը, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Իրավախախտումը հայտնաբերվել է ՕՀՄ անցկացրած պաշտոնատար անձանց կողմից կատարված ՕՀՄ-ի արդյունքում, որի շրջանակներում կատարվել են արտաքին դիտում, օպերատիվ հարցում, շենք շինությունների, իրերի և փաստաթղթերի հետազոտում: Դրանց արդյունքում ստացված ապացույցները կցվել են գործին:

Վիճարկվող ակտով արձանագրված որևէ փաստ վեճի առարկա չի դարձել Դատարանում, մինչդեռ Վերաքննիչ դատարանը վարչական ակտով արձանագրված և ապացուցման կարիք չունեցող փաստերի մասին իրավական դիրքորոշում է արտահայտել՝ այդպիսով թույլ տալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում: Ակտով արձանագրված բոլոր փաստերն ապացուցման կարիք չունեցող փաստեր են, քանի որ հայցվորը որևէ կերպ այդ փաստերը չի վիճարկել:

Վերաքննիչ դատարանի որոշման առանցքում այն եզրահանգումն է, որ Կոմիտեն արձանագրված խախտումը բացահայտել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 12.09.2022 թվականի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 06.09.2022 թվականի դիրքորոշումների արդյունքում, մինչդեռ նշված գրությունները

վարույթն իրականացնող մարմնի համար հանդիսացել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով նախատեսված գրավոր ապացույցներ: Նշված դիրքորոշումներն իրավախախտումը հայտնաբերելու և արձանագրելու հետ որևէ առնչություն չունեն:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 02.05.2025 թվականի որոշումը և այն փոփոխել՝ հայցը մերժել կամ գործն ուղարկել նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Կոմիտեի ՀՕՀՎ պետի 16.09.2022 թվականի թիվ 1518030 որոշման հիման վրա Ընկերության նկատմամբ իրականանցվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ **(գ. թ. 56):**

2) Կոմիտեի հետաքննության օպերատիվ հետախուզության վարչության 23.09.2022 թվականի թիվ 1518030 արձանագրության համաձայն՝ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Թխկուտ բնակավայրի տարածքում գտնվող «ՍԻՓԱՆ-1» ՍՊ ընկերությանը պատկանող ֆաբրիկայի տարածքում գտնվում են նախկինում օգտակար հանածոների հարստացման և թանկարժեք մետաղների կորզման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոնների թվով 5 պոչամբարներ (...):

(...) Օպերատիվ-հետախուզական միջոցառումների անհրաժեշտությունից ելնելով, Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Թխկուտի ոսկու կորզման ֆաբրիկայի տարածքում գտնվող թվով 5 պոչամբարից տեղահանված պոչանքի ծավալը ճշտելու, ինչպես նաև պոչամբարներում կուտակված պոչանքում ոսկու և ուղեկցող այլ մետաղների հնարավոր պարունակության վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու խնդրանքով գրություն է ուղարկվել ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին, որին ի պատասխան հայտնվել է, որ Ընկերությանը պատկանող ֆաբրիկայի տարածքում առկա թվով 5 պոչամբարներից մեկից տեղահանվել է 2665,2մ3 ծավալով պոչանք, իսկ մնացած չորսում՝ պոչանքի տեղահանում չի իրականացվել **(գ.թ. 51-54):**

3) Սիլվա Համբարձումյանը 22.09.2022 թվականին տված հայտարարությամբ հայտնել է, որ հանդիսանում է Ընկերության, «Սիփան-1» և «Սիլվի Էյ Ջի» ՍՊ ընկերությունների հիմնադիրը և տնօրենը: Ընկերությունը հիմնադրվել է 2019 թվականին, որպեսզի իրականացնի Սյունիքի մարզ Վարդանիձոր համայնքում գտնվող ոսկու կորզման արտադրամասի և Տերտերասար վայրում գտնվող ոսկու հանքի շահագործումը: Ընկերությունը 2020 թվականի օգոստոս ամսից իրականացնում է կազմակերպչական աշխատանքներ ոսկու կորզման նպատակով: Ընդունվել են աշխատակիցներ, ձեռք են բերվել ապրանքներ, նյութական արժեքներ: Իրականացվում են վերանորոգման աշխատանքներ, որի արդյունքում 2022 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին

օգտագործվել են պոչանքի թափոնները մոտ 300 տոննա ծավալով, ստացվել է փորձնական արդյունք 300-320 գրամ ոսկու ձուլակտոր 700-750% պարունակությամբ **(գ.թ.78):**

4) Կոմիտեի իրավաբանական վարչության «Հարկային պատավորությունների հաշվարկման և գանձման առաջադման վերաբերյալ» 20.10.2022 թվականի թիվ 1518030 վարչական ակտով Ընկերությունը ենթարկվել է հարկային պատասխանատվության ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով՝ առանց թույլտվության և լիցենզիայի ընդերքօգտագործման թափոններ վերամշակելու համար **(գ.թ.42-46):**

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասի, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 60.2-րդ հոդվածի 2-րդ մասի խախտման հետևանքով թույլ է տրվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, և որը հիմնավորվում է ստորև ներկայացված պատճառաբանություններով.

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ առանց թույլտվության ընդերքի օգտագործման համար նախատեսված հարկային պատասխանատվությանը:

ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի՝ օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր մուծելու, պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ կատարելու պարտականությունը: Նշված նորմով ամրագրված սահմանադրական պարտականության պատշաճ կատարման ապահովմանն է ուղղված ՀՀ հարկային օրենսդրությունը, այդ թվում՝ ՀՀ հարկային օրենսգիրքը: Հարկեր, տուրքեր մուծելու և պարտադիր այլ վճարումներ կատարելու սահմանադրաիրավական պարտականության չկատարումը հանգեցնում է պետության կողմից դրանց՝ իրավական հարկադրանքի միջոցով գանձմանը: Ըստ այդմ՝ ՀՀ հարկային օրենսգրքի 77-րդ գլուխը սահմանում է հարկային իրավախախտումների տեսակները և դրանց կատարման դեպքում հարկային պատասխանատվությունը:

ՀՀ հարկային օրենսգրքի նշված գլխով նախատեսված հարկային իրավախախտում է լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելը կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելը կամ առանց արտոնագրի գործունեություն իրականացնելը, որի համար հարկային պատասխանատվություն սահմանված է ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածով:

Սույն գործի նկատմամբ կիրառելի խմբագրությամբ գործած ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «Համալիր հարկային ստուգումների ընթացքում և (կամ) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերված՝ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան ծանուցման ենթակա գործունեությունն առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու (այդ թվում՝ լիցենզիայի կամ թույլտվության գործողությունը կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքն օրենքով սահմանված կարգով կասեցված լինելու) դեպքում գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գանձվում է տուգանք՝ լիցենզիայի կամ թույլտվության տրման կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով, բայց ոչ պակաս 500 հազար դրամից:»:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված խախտումներ հայտնաբերվելու դեպքերում խախտումներ կատարած կազմակերպությունից կամ անհատ ձեռնարկատիրոջից գործունեության յուրաքանչյուր տեսակի մասով գանձվում է նաև լիցենզիան տալու կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար օրենքով սահմանված պետական տուրքի (տարեկան պետական տուրքի գանձման օբյեկտի դեպքում՝ մեկ տարվա պետական տուրքի) դրույքաչափին համապատասխան գումարի չափով վնասի հատուցում:(...)

Նշված հոդվածով նախատեսված իրավախախտումների առանձնահատկությունը դրսևորվում է նախևառաջ նրանում, որ դրանք կարող են հայտնաբերվել կամ համալիր հարկային ստուգումների ընթացքում, կամ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում: Նշված նորմով նախատեսված պատասխանատվությունը սահմանված է հետևյալ հարկային իրավախախտումների համար.

- «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու,
- «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան ծանուցման ենթակա գործունեությունն առանց ծանուցման իրականացնելու,
- առանց թույլվտության ընդերքն օգտագործելու,
- առանց թույլտվության բնական պաշարներն օգտագործելու,
- առանց լիցենզիայի ընդերքն օգտագործելու,
- առանց լիցենզիայի բնական պաշարներն օգտագործելու համար:

«Ընդերքի օգտագործում» հասկացության բովանդակության բացահայտումը պահանջում է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) նորմերի համակարգային վերլուծություն:

Այսպես, Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «ընդերք» հասկացությունը սահմանում է որպես հողածածկույթից ներքև, իսկ դրա բացակայության դեպքում՝ երկրի մակերևույթից, ջրավազանների կամ ջրհոսքերի հատակից ներքև՝ ըստ խորության տեղադրված երկրակեղևի մաս, որը մատչելի է ընդերքօգտագործման համար:

Նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով «ընդերքօգտագործումը» բնորոշվում է որպես.

-երկրաբանական ուսումնասիրությունների նպատակով ընդերքի օգտագործում,

- օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի օգտագործում,

- ընդերքօգտագործման թափոնների վերամշակում:

Նույն հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը սահմանում է «օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն» հասկացության բովանդակությունը: Այն է՝ օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությունը թույլտվություն է, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքներ: Օրենսգրքում «ընդերքօգտագործման թափոններ» հասկացությունը կիրառվում է այն իմաստով, որը սահմանված է «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով: Նշված հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնները բնորոշվում են որպես արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արգասիքների, այլ արտադրանքի կամ մթերքի մնացորդներ, ինչպես նաև ապրանքներ (արտադրանք), որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները: Իսկ թափոնների վերամշակումը, ըստ նույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ տեխնոլոգիական գործողությունների իրականացում է, որոնք կապված են թափոնների ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկությունների փոփոխման հետ:

Օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետն իր հերթին հստակեցնում է «ընդերքօգտագործման թափոնների վերամշակում» հասկացության բովանդակությունը, այն է՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակումը տեխնոլոգիական գործողությունների իրականացում է, որոնք կապված են թափոնների մեխանիկական, ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկությունների փոփոխման հետ, և որի նպատակն է ընդերքօգտագործման թափոններից օգտակար հանածոյի կորզումը, այդ թվում՝ դրա չափերի փոփոխումը, դասակարգումը, առանձնացումը, թափոնների վերամշակումը:

Նույն հոդվածի 1-ին մասի 43-րդ կետի համաձայն՝ բոլոր ընդերքօգտագործողները կրում են ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլան մշակելու և ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին ներկայացնելու պարտականություն, իսկ նույն 44-րդ կետի համաձայն՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլան մշակում և ընդերքի օգտագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման

լիազոր մարմին են ներկայացնում միայն այն ընդերքօգտագործողները, որոնք ցանկանում են վերամշակել ընդերքօգտագործման թափոնները:

Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդերքօգտագործման իրավունքը տրամադրում է լիազոր մարմինը՝ նույն օրենսգրքով և իրավական այլ ակտերով սահմանված ընդհանուր հիմունքներով կամ մրցութային կարգով՝ ընդերքօգտագործման թույլտվության կամ համաձայնության, լեռնահատկացման ակտի, ինչպես նաև ընդերքօգտագործողի հետ ընդերքօգտագործման պայմանագրի կնքման միջոցով:

Օրենսգրքի «Ընդերքօգտագործման թափոնների կառավարումը և ընդերքօգտագործման թափոնների վերամշակումը: Ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանները» վերտառությամբ 5.1-րդ գլխի 60.2-րդ հոդվածը սահմանում է.

«(...) 2. Ընդերքօգտագործման թափոնների վերամշակումն իրականացվում է այն ընդերքօգտագործողների կողմից, որոնք ցանկանում են վերամշակել ընդերքօգտագործման թափոններ և այդ նպատակով նույն օրենսգրքի 5-րդ գլխով սահմանված կարգով ներկայացրել են համապատասխան դիմում:

3. Ընդերքօգտագործման թափոնների վերամշակումն իրականացվում է ընդերքօգտագործողների միջոցներով՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանին համապատասխան:

4. Ընդերքօգտագործման թափոնների վերամշակման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Այն ընդերքօգտագործողները, որոնք վերամշակում են ընդերքօգտագործման թափոններ, իրականացնում են միայն ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանով նախատեսված միջոցառումներ:»:

Օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործում է ընդերքօգտագործման վճարովիության ընդհանուր կանոնը: Ընդերքն օգտագործելիս, ի թիվս այլ վճարների, ենթակա է վճարման ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրք:

Օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենսգրքի պահանջների խախտման համար ընդերքօգտագործողները և (կամ) նրանց պաշտոնատար անձինք կրում են Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով պատասխանատվություն:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է առանց ընդերքօգտագործման իրավունքի ընդերքօգտագործման իրականացումը:

Վերը նշված իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ ընդերքօգտագործման թափոնների վերամշակումն ընդերքօգտագործման առանձին դրսևորում է: Ինչպես ընդերքօգտագործման մյուս դրսևորումների՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով ընդերքօգտագործումը, այնպես էլ թափոնների վերամշակումը կարող է իրականացվել բացառապես իրավասու մարմնի կողմից տրված՝ ընդերքն օգտագործելու իրավունք

վերապահող թույլտվության հիման վրա: Առանց համապատասխան թույլտվության ընդերքօգտագործման թափոնների վերամշակումը ոչ իրավաչափ վարքագիծ է, որի համար սահմանված է համապատասխան հարկային պատասխանատվություն:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե համալիր հարկային ստուգումների ընթացքում և (կամ) «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվում է առանց իրավասու մարմնի կողմից տրված թույլտվության ընդերքօգտագործման թափոնների վերամշակման գործունեություն, ապա վրա է հասնում ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք) են կարգավորվում օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման բնագավառում ծագող իրավահարաբերությունները:

Օրենքի 14-րդ հոդվածը սահմանում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսակները: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հարկային մարմիններն իրավունք ունեն անցկացնելու հետևյալ օպերատիվ-հետախուզական միջոցառումները՝ օպերատիվ հարցում, օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում, համեմատական հետազոտումների նմուշների հավաքում, հսկիչ գնում, վերահսկելի մատակարարում և գնում, իրերի և փաստաթղթերի հետազոտում, արտաքին դիտում, շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտում, օպերատիվ ներդրում և օպերատիվ փորձարարություն:

Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացվում է օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի օպերատիվ ստորաբաժանման ղեկավարի որոշման հիման վրա, բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի:

Օրենքի «Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների ամրագրումը և օգտագործումը» վերտառությամբ 40-րդ հոդվածը սույն գործի նկատմամբ կիրառելի է 09.06.2022 թվականին ընդունված ««Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-154-Ն ՀՀ օրենքով կատարված խմբագրությամբ, որի 28-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը. վերջինս սահմանում էր, որ «Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները, որոնք ձեռք են բերվել սույն օրենքով սահմանված կարգով, հանդիսանում են ապացույցներ, բացառությամբ սույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ և 9-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների:»:

Օրենքի 40-րդ հոդվածի 3.1-ին կետը սահմանում է. «3.1. Սույն օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կազմված արձանագրությունը հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության

հարկային օրենսգրքով հարկային իրավախախտումների համար սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու համար հետևյալ դեպքերում.

(...) 3) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ լիցենզավորման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի իրականացնելու կամ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան ծանուցման ենթակա գործունեությունն առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու (այդ թվում՝ լիցենզիայի կամ թույլտվության գործողությունը կամ ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունքն օրենքով սահմանված կարգով կասեցված լինելու) դեպքերում. (...):

(...) Սույն մասում նշված դեպքերում հարկային պարտավորությունները հաշվարկում և գանձման է առաջադրում հարկային մարմինը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակներում և նույն օրենքով սահմանված կարգով հարկային մարմնի ղեկավարի կամ նրա լիազորած պաշտոնատար անձի ընդունած վարչական ակտով:»:

Վերը նշված իրավակարգավորումների հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հարկային մարմինների կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կազմված արձանագրությունը հիմք է հանդիսանում ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցի կիրառման համար: Ընդ որում, ցանկացած տեսակի օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքներն այդ միջոցառումների արդյունքում հայտնաբերված հարկային իրավախախտման ապացույց են:

ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի և «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի վերը նշված նորմերի համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի հիմքով հարկային պատասխանատվության ենթակա սուբյեկտը վարչական վարույթի շրջանակներում ընդունում է իր կողմից ընդերքօգտագործման թափոնների վերամշակման գործունեություն իրականացնելու փաստը և նշված նորմով նախատեսված հարկային պարտավորությունները հաշվարկելու և գանձելու վերաբերյալ հարկային մարմնի վարչական ակտը դատական կարգով վիճարկելիս ևս չի վիճարկում նշված փաստը՝ դատարանի առջև բարձրացնելով զուտ իրավական վեճ առ այն, թե արդյոք տվյալ գործունեության համար պահանջվում է ընդերքօգտագործման թույլտվություն, ապա դատարանի խնդիրն է լուծել այդ իրավական վեճը՝ առանց կասկածի տակ դնելու ընդերքօգտագործման թափոնների վերամշակման գործունեության փաստը:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն վարչական գործը հարուցվել է Ընկերության հայցի հիման վրա, որով վերջինս պահանջել է անվավեր ճանաչել «Հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ» 10.05.2021 թվականի թիվ 1518030 ակտը՝ 100.000.000 ՀՀ դրամի չափով տուգանքի և 10.000.000 ՀՀ դրամի չափով հատուցման ենթակա վնասի գումար հաշվարկելու և գանձման առաջադրելու մասով:

Դատարանի 03.07.2024 թվականի վճռով հայցը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ. *«Դատարանը գտնում է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին մասում առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու արտահայտության կիրառման իմաստով խոսքը վերաբերում է բոլոր այն թույլտվություններին և լիցենզիաներին, որոնք օրենքով նախատեսված են՝ ընդերքի կամ բնական պաշարների օգտագործման համար:*

Ընդսմին, Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ ընդերքն օգտագործելիս կատարվում են հետևյալ վճարները՝ ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման պետական տուրք:

Իսկ նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված վճարը վճարվում է «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 60.2-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակումն իրականացվում է այն ընդերքօգտագործողների կողմից, որոնք ցանկանում են վերամշակել ընդերքօգտագործման թափոններ և այդ նպատակով սույն օրենսգրքի 5-րդ գլխով սահմանված կարգով ներկայացրել են համապատասխան դիմում:

Իսկ նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքներ իրականցնելու իրավունք տալիս է օգտակար հանածոյի արդյունահանման թույտվությունը:

Միաժամանակ, Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է առանց ընդերքօգտագործման իրավունքի ընդերքօգտագործման իրականացումը: Առանց սույն օրենսգրքով սահմանված թույլտվությունների օգտակար հանածոների արդյունահանում կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրություն իրականացնելն առաջացնում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված պատասխանատվություն: «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ գանձվում է պետական տուրք՝ տարեկան բազային տուրքի 10.000-ապատիկի չափով:

Սույն գործում առկա ապացույցներով հաստատվում է, որ «Էս-Բի Գոլդ» ՍՊ ընկերության կողմից 2022 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին օգտագործվել են պոչանքի

թափոնները՝ շուրջ 300 փոննա, այսինքն՝ Ընկերությունն իրականացրել է ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքներ, սակայն չի ունեցել օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն:

Նման պայմաններում Դատարանն իրավաչափ է համարում վիճարկվող որոշմամբ հայցվոր ընկերության նկատմամբ ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19.4-րդ հոդվածի 1-ին մասի կիրառումը, և գտնում, որ հայցվորի ներկայացրած փաստարկները հիմք չեն՝ այն անվավեր ճանաչելու համար:»:

Վերաքննիչ դատարանը 02.05.2025 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարել է. Դատարանի 03.07.2024 թվականի վճիռը բեկանել և փոփոխել է՝ հայցը բավարարել է հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) ընդերքօգտագործման թափոնների վերամշակում է համարվում տեխնոլոգիական գործողությունների իրականացումը, որոնք կապված են թափոնների մեխանիկական, ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական հատկությունների փոփոխման հետ, և որի նպատակն է ընդերքօգտագործման թափոններից օգտակար հանածոյի կորզումը, այդ թվում՝ դրա չափերի փոփոխումը, դասակարգումը, առանձնացումը, թափոնների վերամշակումը, իսկ ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության առկայությունը:*

(…) Վերաքննիչ դատարանը, ուսումնասիրելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության «Հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ» 20.10.2022 թվականի թիվ 1518030 ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի նյութերում առկա Պետական եկամուտների կոմիտեի հետաքննության օպերատիվ հետախուզութան վարչության կողմից 23.09.2022 թվականին կազմված թիվ 1518030 արձանագրության բովանդակությունը, արձանագրում է, որ դրանում նշված է, որ վերը նշված դիտարկումների մասով դիրքորոշումներ ներկայացնելու խնդրանքով գրություններ են ուղարկվել ընդերքօգտագործման ոլորտում ՀՀ կառավարության լիազոր մարմին հանդիսացող ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, ինչպես նաև շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին հանդիսացող ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություններ: Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև նշված երկու գերատեսչությունների կողմից ներկայացված դիրքորոշումները՝ «ԷՍ-ԲԻ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող գործունեությունը դիտարկվել է առանց ընդերքօգտագործման իրավունքի ընդերքը օգտագործելու, ինչպես նաև առանց լիցենզիայի վտանգավոր թափոնների գործածության գործունեություն: (…)

Այսինքն՝ ստացվում է, որ Պետական եկամուտների կոմիտեի հետաքննության օպերատիվ հետախուզութան վարչության կողմից 23.09.2022 թվականին կազմված թիվ 1518030 արձանագրությամբ հարուցվել է վարչական վարույթ, իսկ վերոհիշյալ արձանագրության բովանդակությունից հետևում է, որ «ԷՍ-ԲԻ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող գործունեությունը առանց ընդերքօգտագործման իրավունքի ընդերքը

օգտագործելու, ինչպես նաև առանց լիցենզիայի վտանգավոր թափոնների գործածության գործունեություն դիտարկելու հիմքում դրվել են երկու գերատեսչությունների՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 12.09.2022թ. և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 06.09.2022թ. ներկայացված դիրքորոշումները:

(…) սույն դեպքում վիճարկվող վարչական ակտի կայացման հիմքում դրված երկու գերատեսչությունների՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 12.09.2022թ. և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 06.09.2022թ. ներկայացված դիրքորոշումները ներկայացվել են նախքան ՀՀ ՊԵԿ հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչության պետի 16.09.2022թ. թիվ 1518030 որոշման կայացումը, որով թույլատրվել է իրականացնելու օպերատիվ հարցում, իրերի և փաստաթղթերի հետազոտում, արտաքին դիտում, շենքերի, կառույցների, տեղանքի, շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտում (ՕՀՄ N 1, N 6, N 7, N 10) օպերատիվ հետախուզական միջոցառումներ «ԷՍ-ԲԻ ԳՈԼԴ» ՍՊ ընկերության նկատմամբ: Այսինքն՝ ստացվում է, որ սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտի կայացման հիմքում դրված ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 12.09.2022թ. և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 06.09.2022թ. ներկայացված դիրքորոշումները ձեռք չեն բերվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, քանի որ ՀՀ ՊԵԿ ՀՕՀՎ ոլորտային թիվ 5 բաժնի օպերլիազորները համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն ստացել են միայն ՀՀ ՊԵԿ հետաքննության և օպերատիվ-հետախուզության վարչության պետի 16.09.2022թ. թիվ 1518030 որոշման կայացումից հետո, ուստի ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 12.09.2022թ. և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 06.09.2022թ. ներկայացված դիրքորոշումները, որոնք նախորդել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելը թույլատրելու մասին որոշման կայացման, չեն կարող դրվել սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտի հիմքում:

Ինչ վերաբերում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում Սիլվա Հարությունի Համբարձումյանի կողմից 22.09.2022 թվականին տրված հայտարարությանը, ապա Վերաքննիչ դատարանը նախ արձանագրում է, որ վարչական վարույթի նյութերում բացակայում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում կազմված օրենքով սահմանված արձանագրությունը, ուստի պարզ չէ, թե արդյոք վերոհիշյալ հայտարարությունը ձեռք է բերվել օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում: Բացի այդ, Սիլվա Համբարձումյան կողմից 22.09.2022թ. տրված հայտարարությամբ ընդամենը հայտնվել է, որ հանդիսանում է «Էս-Բի Գոլդ», «Սիփան-1» և «Սիլվի Էյ Ջի» ՍՊ ընկերությունների հիմնադիրը և տնօրենը: «Էս-Բի Գոլդ» ՍՊԸ-ն հիմնադրել է 2019 թվականին, նշված ընկերությունը հիմնադրվել է, որպեսզի իրականացնի Սյունիքի մարզ Վարդանիձոր համայնքում գտնվող ոսկու կորզման արտադրամասի և Տերտերասպ վայրում գտնվող ոսկու հանքի շահագործումը: «Էս-Բի Գոլդ» ՍՊԸ-ն

իրականացնում է 2020 թվականի օգոստոս ամսից կազմակերպչական աշխատանքներ ոսկու կորզման նպատակով: Ընդունվել են աշխատակիցներ, ձեռք են բերվել ապրանքներ, նյութական արժեքներ: Իրականացվում են վերանորոգման աշխատանքներ և այլն, որի արդյունքում 2022 թվականի հուլիս օգոստոս ամիսներին օգտագործվել է պոչանքի թափորները մոտ 300 տոննա ծավալով, ստացվել է փորձնական արդյունք 300-320 գրամ ոսկու ձուլակտոր 700-750% պարունակությամբ:

Ամփոփելով ամբողջ վերոշարադրյալը՝ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության «Հարկային պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ» 20.10.2022 թվականի թիվ 1518030 վարչական ակտից պարզ չէ, թե «ԷՍ-ԲԻ ԳՈԼԴ» ՍՊԸ-ի կողմից իրականացվող գործունեությունը առանց ընդերքօգտագործման իրավունքի ընդերքը օգտագործելու գործունեություն դիտարկելու հիմքում օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում ձեռնարկված միջոցառումների արդյունքում հայտնաբերված ինչ տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր են դրվել՝ հաշվի առնելով, որ ակտում հղում չկա նման փաստաթղթերի, ինչպես նաև նման փաստաթղթեր և տեղեկություններ բացակայում են վարչական վարույթի նյութերում, իսկ ինչպես նշվեց, ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 12.09.2022թ. և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 06.09.2022թ. ներկայացված դիրքորոշումները, որոնք նախորդել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելը թույլատրելու մասին որոշման կայացման, չեն կարող դրվել սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտի հիմքում: Վերոգրյալի հաշվառմամբ Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթի նյութերով (/այդպիսիք կարող են լինել՝ օպերատիվ-հետախուզական միջոցառման ընթացքում ձեռնարկված միջոցառումների արդյունքում հայտնաբերված տեղեկությունները, նյութերը և փաստաթղթերը) չի հաստատվում «ԷՍ-ԲԻ ԳՈԼԴ» ՍՊ ընկերությանը դրանով վերագրված իրավախախտման կատարման փաստը:»:

Վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո համադրելով սույն գործի փաստերը և գնահատելով Վերաքննիչ դատարանի եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը.

Սույն գործի փաստերի համաձայն՝ Կոմիտեի ՀՕՀՎ պետի 16.09.2022 թվականի թիվ 1518030 որոշմամբ, ղեկավարվելով «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածներով թույլատրվել է իրականացնել օպերատիվ հարցում, իրերի և փաստաթղթերի հետազոտում, արտաքին դիտում, շենքերի, կառույցների, տեղանքի շինությունների և տրանսպորտային միջոցների հետազոտում օպերատիվ-հետախուզական միջոցառումներ Ընկերության նկատմամբ:

Նշված որոշման հիմքով ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում Ընկերության հիմնադիր և տնօրեն Սիլվա Համբարձումյանը 22.09.2022 թվականին տվել է հայտարարություն առ այն, որ հանդիսանում է Ընկերության, «Սիփան-1»

և «Սիլվի Էյ Ջի» ՍՊ ընկերությունների հիմնադիրը և տնօրենը: Ընկերությունը հիմնադրվել է 2019 թվականին՝ Սյունիքի մարզ Վարդանիձոր համայնքում գտնվող ոսկու կորզման արտադրամասի և Տերտերասար վայրում գտնվող ոսկու հանքի շահագործում իրականացնելու նպատակով: Ընկերությունը 2020 թվականի օգոստոսից իրականացնում է կազմակերպչական աշխատանքներ ոսկու կորզման նպատակով: Ընդունվել են աշխատակիցներ, ձեռք են բերվել ապրանքներ, նյութական արժեքներ: Իրականացվում են վերանորոգման աշխատանքներ, որի արդյունքում 2022 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին օգտագործվել են պոչանքի թափոնները մոտ 300 տոննա ծավալով, ստացվել է փորձնական արդյունք 300-320 գրամ ոսկու ձուլակտոր 700-750% պարունակությամբ:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Սիլվա Համբարձումյանի նշված հայտարարությունը «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի՝ ՀՕ-154-Ն օրենքի խմբագրությամբ, կարգավորումներին համապատասխան հանդիսանում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում ձեռք բերված ապացույց, որով Ընկերության տնօրենն ընդունել է Ընկերության կողմից ընդերքօգտագործման թափոնների վերամշակում իրականացնելու փաստը: Ընդ որում, նշված փաստը որևէ կերպ Ընկերության կողմից չի վիճարկվել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի 3.1-ին համապատասխան հարուցված վարչական վարույթի շրջանակներում:

Ավելին, Վճռաբեկ դատարանը, Ընկերության հայցադիմումի և վերաքննիչ բողոքի բովանդակության ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ Ընկերության կողմից ընդերքօգտագործման թափոնների վերամշակում իրականացնելու փաստը չի վիճարկվել ո՛չ Դատարանում, ո՛չ Վերաքննիչ դատարանում: Ըստ այդմ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան («Ապացուցման կարիք չունեն այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը համարում է, որ դրանց ապացուցումն անհրաժեշտ է:») Ընկերության կողմից ընդերքօգտագործման թափոնների վերամշակում իրականացնելու փաստն անվիճելի փաստ է և կարիք չունի ապացուցման:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով Դատարանի և Վերաքննիչ դատարանի առջև բարձրացված է եղել զուտ իրավական վեճ հետևյալի մասին. արդյոք ընդերքօգտագործման թափոնների վերամշակում իրականացնելու համար պահանջվում է իրավասու մարմնի կողմից տրված՝ ընդերքօգտագործման իրավունք վերապահող թույլտվություն: Փաստի վերաբերյալ վեճ Դատարանին և Վերաքննիչ դատարանին Ընկերության կողմից չի առաջադրվել: Ըստ այդմ՝ Դատարանից և Վերաքննիչ դատարանից պահանջվում էր լուծել նշված իրավական վեճը՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-ին մասին համապատասխան կասկածի տակ չդնելով Ընկերության կողմից ընդերքօգտագործման թափոնների վերամշակում իրականացնելու փաստը, ինչն իրավաչափորեն կատարել է Դատարանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը ևս, գտնելով, որ ընդերքօգտագործման թափոնների վերամշակում իրականացնելու համար պահանջվում է իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան թույլտվություն, իրավաչափորեն լուծել է վերաքննիչ բողոքում բարձրացված իրավական վեճը, սակայն կասկածի տակ դնելով Ընկերության կողմից ընդերքօգտագործման թափոնների վերամշակում իրականացնելու փաստը՝ թույլ է տվել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի խախտում:

Ինչ վերաբերում է Վերաքննիչ դատարանի դիրքորոշմանը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 12.09.2022 թվականի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 06.09.2022 թվականի դիրքորոշումները «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ձեռք բերված չլինելու վերաբերյալ փաստարկին, ապա դրանք փաստի վերաբերյալ ապացույցներ չեն. դրանք զուտ համապատասխան օրենսդրական ակտերի վերլուծության հիման վրա տրված մասնագիտական կարծիքներ են, որոնք կարող էին օժանդակել վարույթն իրականացնող մարմնին Ընկերության կողմից իրականացված գործունեությունը գնահատելու հարցում:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանը, անվիճելի համարելով Ընկերության կողմից ընդերքօգտագործման թափոնների վերամշակում իրականացնելու փաստը և գտնելով, որ նման գործունեություն իրականացնելու համար պահանջվում էր իրավասու մարմնի կողմից տրված համապատասխան թույլտվություն, գտնում է, որ Ընկերությունն իրավաչափորեն է ենթարկվել հարկային պատասխանատվության ՀՀ հարկային օրենսգրքի 408-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի հիմքով, որպիսի նորմերի խախտմամբ կայացվել է Վերաքննիչ դատարանի որոշումը:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 150-րդ, 151-րդ և 163-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալու Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հետևյալ հիմնավորմամբ.

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելը Կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված՝ անձի արդար դատաքննության իրավունքի տարր է: Հետևաբար գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման

տեսանկյունից: Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, քանի որ սույն գործով վերջնական դատական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Դատարանի վճռին օրինական ուժ տալիս Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Նկատի ունենալով այն, որ Կոմիտեի կողմից վճռաբեկ բողոքի համար արդեն վճարվել է 30.000 ՀՀ դրամ, և քանի որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման մասնակիորեն, այսինքն՝ այդ ծավալով վճարված պետական տուրքն անհրաժեշտ է եղել վճռաբեկ բողոք բերած անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար, ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կոմիտեի կողմից նախապես վճարված պետական տուրքի գումարը՝ 30.000 ՀՀ դրամի չափով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի հիմքով ենթակա է հատուցման Ընկերության կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 02.05.2025 թվականի որոշումը և օրինական ուժ տալ ՀՀ վարչական դատարանի 03.07.2024 թվականի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. «ԷՍ-ԲԻ ԳՈԼԴ» ՍՊԸ-ից հօգուտ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի բռնագանձել 30.000 ՀՀ դրամ՝ որպես վճռաբեկ բողոքի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող **Հ. ԲԵԴԵՎՅԱՆ**

զեկուցող **Լ. ՀԱԿՈԲՅԱՆ**

Ա. ԹՈՎՄԱՍՅԱՆ

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

Ք. ՄԿՈՅԱՆ